

# ԳԱՅԼՆ ՈՒ ՁԻՆ



Գայլն ուզում է ձիուն ուտել: Ձին ասում է.

– Ա՛յ գայլ, ես շատ ծեր եմ, ինձ մի՛ կեր:

Գայլն ասում է.

– Ես ինչպե՞ս իմանամ, որ դու ծեր ես:

Ձին ասում է.

– Իմ տարիքը իմ ոտքի տակ գրված է, նայի՛ր՝ կտեսնես:



Գայլը մոտենում է, որ կարդա: Ձին այնպես է քացի տալիս, որ գայլի աչքերը պեծին-պեծին են տալիս:

**ձ**

այն
ավար
ղաղ
տան
գան
վար
որ
բար
սան
գող
ղեղ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | ձ | | | |
| 2 | ձ | | | |
| 3 | ձ | | | |
| 4 | ձ | | | |
| 5 | ձ | | | |
| 6 | ձ | | | |
| 7 | ձ | | | |

1. Կենդանի, որը ցամաքում չի կարող ապրել:
2. Ընտանի արագավազ կենդանի:
3. Հավկիթ:
4. Մարդու մարմնի մաս:
5. Կենդանու երեխան:
6. Բուսական յուղ:
7. Ձմռանը գալիս է, գարնանը՝ գնում:

ձ ձ Ձ Ձ

Ձորագյուղ, ձկնորս

Ձկնորսը ձուկ է որսում: